



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1 (58)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

ԱՆՀԱՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՆՋԵԼԱ ՔԱՐԹԵՐԻ «ԳԻՇԵՐՆԵՐԸ
ԿՐԿԵՍՈՒՄ» ՎԵՊՈՒՄ

ԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆ

Հիմնաբառեր՝ Անջելա Քարթեր, ժամանակակից անգլիական գրականություն, «Գիշերները կրկեսում» վեպ, անհատի հիմնախնդիր, ֆեմինիստական գրականություն

Հոդվածում ուսումնասիրվում են անգլիացի հեղինակ Անջելա Քարթերի «Գիշերները կրկեսում» վեպի կերպարները և նրանց փոխհարաբերությունները՝ մոգական ռեալիզմի համատեքստում, ինչպես նաև վերլուծվում է անհատի հիմնախնդիրը, որը ներկայացված է կերպարների բարդ փոխհարաբերությունների և գլխավոր կերպարի ու տարբեր հասարակական միջավայրերի փոխհարաբերությունների միջոցով: Այն ներկայացված է նաև վեպի գեղարվեստական առանձնահատկությունների և գաղափարական ուղղվածության վերլուծության միջոցով: Վեր է հանվում Անջելա Քարթերի հիմնական ասելիքը՝ անհատի և զանգվածի փոխհարաբերության, ինչպես նաև անհատի ինքնության պահպանման խնդրի վերաբերյալ:

Յուրաքանչյուր ժամանակաշրջան անհատի իր գեղարվեստական կերպարն ունի, ինչպես նաև, իր առանձնահատուկ մոտեցումը՝ անհատի և հասարակության փոխհարաբերության հիմնախնդրին: Այդպես, 20-րդ դարի երկրորդ կեսի եվրոպական և ամերիկյան գրականության մեջ ի հայտ են գալիս անհատական նոր հատկանիշներ ունեցող կերպարներ, և այլ տեսանկյունից է սկսում ընկալվել և ներկայացվել նաև անհատի հիմնախնդիրը: Եթե 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի եվրոպական և ամերիկյան գրականությունը հարուստ է վառ և ինքնատիպ անհատների կերպարներով, ապա 20-րդ դարի երկրորդ կեսին արդեն առաջ է գալիս մարդու ինքնության պահպանման, ամբոխի կամ զանգվածի անդեմության խնդիրը, և այդ պարագայում արդեն, անհատի կերպարանափոխության և նրա բարոյական նկարագրի հիմնախնդիրը: Իսկ գրականությունը, արտահայտելով ժամանակաշրջանի գաղափարները՝ փորձում է լուծումներ առաջարկել գոյություն ունեցող խնդիրներին:

Անջելա Քարթերը 20-րդ դարի երկրորդ կեսի այն գրողներից է, որը շատ զգայուն է և ընկալունակ իր ժամանակաշրջանի զարգացման մտայնությունների նկատմամբ և շատ նրբորեն ու խորն է կարողացել իր գրականության մեջ արտացոլել ժամանակի գաղափարները: «Գիշերները կրկեսում» վեպում Քարթերն իր գաղափարական ուղերձները հաղորդում է հմտորեն կերտված բազմաթիվ և բազմապիսի կերպարների միջոցով՝ օգտագործելով մոգական ռեալիզմի այլաբանական և խորհրդանշական մեթոդները:

Ա. Քարթերի ստեղծագործություններն ընթերցելիս կարող է թվալ, թե նրա համար գլխավորը կանանց և տղամարդկանց հավասարության, կանանց իրավունքների և ազատության խնդիրներն են: Սակայն, ավելի խոր ուսումնասիրության պարագայում տեսանելի է, որ Քարթերի մտահոգության և հետաքրքրության ասպարեզն ավելի լայն է և վերաբերում է ժամանակակից աշխարհին սպառնացող բազմաթիվ վտանգներին, այդ թվում՝ մարդու՝ որպես անհատի, վերացման հիմնախնդիրն: «Գիշերները կրկեսում» վեպը լույս է տեսել 1984-ին և նույն թվականին արժանացել է «Ջեյմս Թեյթ Բլեք Մեմորիալ» մրցանակին (Flood 2012): Հետագայում, 2012 թվականին, այն ճանաչվել է երբևէ այդ մրցանակին արժանացած լավագույն վեպ:

Վեպը սկսվում է տեսարանով, երբ գլխավոր հերոսը՝ Սոֆի Ֆեվերսը, թռչնի թևերով խոշորամարմին կինը, իր հանդերձասրահում հարցազրույց է տալիս քսանհինգամյա լրագրող Ջեք Ուոլսերին, որը Նյու Յորքից Լոնդոն էր ժամանել՝ սենսացիոն հոդված գրելու նպատակով: Հենց սկզբից երկու հիմնական կերպարների՝ Ֆեվերսի և Ուոլսերի համեմատության և հակադրության միջոցով Քարթերը ցույց է տալիս անհատականության և անդեմության, մոգականի և իրականի միջև տարբերությունը, դրանց հատման կետերը, միմյանց միաձուլվելու և միևնույն ժամանակ միմյանց հակասելու հավանականությունը: Ընդհանրապես, անհամատեղելի երևույթների միավորման հնարավորությունը վեպի գլխավոր գաղափարներից մեկն է: Հրաշքներով լի կրկեսը Քարթերը բերում է կյանք և երևակայական աշխարհն ու անուրջները միաձուլում է իրական կյանքի բնականոն ռիթմին, այդպիսով, հեքիաթային շղարշ իջեցնելով մնացած ամեն ինչի վրա: Հ. Սթոդարտը վեպին նվիրված իր աշխատության մեջ գրում է. «Քարթերը հակառեալիստ է: Չնայած այն փաստին, որ նրա ստեղծագործությունը քաղաքական և սոցիալական ուղղվածություն ունի, այն հաստատում է համոզմունքը, որ օբյեկտիվ իրականություն գոյություն չունի» (Stoddart 2007:13):

Ինչպես նշեցինք, Քարթերի ստեղծագործության մեջ առանցքային է անհատի հիմնախնդիրը, որը «Գիշերները կրկեսում» վեպում արտահատված է բազմապիսի և արտառոց կերպարների հոգեբանության և մտածողության միջոցով: Թռչնի թևեր ունենալու փաստը և թռչելու ունակությունը, որի շնորհիվ Ֆեվերսը դարձել էր հայտնի կրկեսային մարմնամարզուհի, անշուշտ, այլաբանական իմաստ ունի: Թռիչքը ազատության, իսկ գունավոր փետուրներով թևերը՝ ինքնատիպության խորհրդանիշ են: Ուշագրավ է վեպում այն հատվածը, երբ Լիզին, որը Ֆեվերսի համար դարձել էր մայր և ընդունել էր նրան այնպիսին, ինչպիսին նա կար՝ օգնելով պահպանել իր արտասովոր ինքնությունը, առաջին անգամ տեսնում է ֆեվերսի թևիկները: Նա ցնծության մեջ կանչում է ընկերուհուն՝ Մա Նելսոնին, գոչելով, որ իրենց թռչնակը պատրաստվում է թռչել. *«Իմ անմեղ փոքրիկ, գուցե, հենց դու ես այս դարի այն երեխան, որ հենց հիմա իր թևիկներով սպասում է Նոր դարաշրջանին, որտեղ ոչ մի կին չղթայված չի լինի գեղնին»*¹(Carter 2006:25): Այստեղ Քարթերն անդրադառնում է կնոջ հոգևոր անազատության հիմնախնդրին և ապա նկարագրում ինքնության պահպանման այն դժվար ուղին, որը, թեև ցավոտ և քարքարոտ, բայց հաղթահարելի է. *«Եվ ես բարձրացրեցի թևերս: Փակեցի աչքերս և առաջ նետվեցի՝ թողնելով, որ ինչ լինում է՝ լինի: Եվ պարոն, ես ընկա: Ես ընկա ինչպես Լուցիֆերը: Ցած, ցած, դոմփյունով ցած ընկա պարսկական գորգի վրա, դեմքով խրվելով ծաղիկների և հրեշների մեջ, որոնք երբեք չեն եղել և ոչ մի անտառում. դրանք երևակայական և վերացական արարածներ էին, ինչպիսին որ ես եմ, պարոն Ուոլսեր: Եվ այդ ժամանակ ես հասկացա, որ դեռևս պատրաստ չեմ կրել իմ մեջքին այն ծանր բեռը, այն փաստը, որ նման չեմ ոչ մեկին»* (Carter 2006:31): Վեպի այս դրվագում Քարթերն անդրադառնում է ինքնության պահպանման, ինչպես նաև անհատի և ամբոխի փոխհարաբերության արդիական խնդրին: Հեղինակի ասելիքը այստեղ շատ հստակ է արտահայտված. անհատականություն լինելու համար պետք է դիմադրել ամբոխին: Անհատի և ամբոխի համակեցությունը հնարավոր է միայն անհատի պայքարի և հաստատակամության շնորհիվ: Կարծում ենք պատահական չէ, որ Քարթերը որպես իր հերոսուհու անկման «վայր» ընտրել է պարսկական գորգը, որին էլ Ֆեվերսը բախվում է դեմքով: Եվ քանի որ խորհրդանիշները Քարթերի գրականության մեջ կարևոր նշանակություն ունեն՝ ոչինչ, ոչ մի իր, ոչ մի անվանում, ինչպես նաև, գործողության վայր՝

¹Հայերեն թարգմանությունները հոդվածի հեղինակինն են:

հեղինակի կողմից պատահական չեն ընտրված: Պարսկական գորգը որպես արևելյան մշակույթի խորհրդանիշ այն միջավայրն է, որը Քարթերն ընտրել է հին և նոր, արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների բախման համար: Քարթերի հերոսը՝ Ֆեվերսն անհատապաշտության գաղափարի մարմնավորումն է, որը արևմտյան քաղաքակրթության առանձնահատկությունն է և հակադիր է արևելյանին: Գորգը ցույց է տալիս Ֆեվերսին իր «այլանդակությունը», որի պատճառը նրա ինքնատիպությունն էր, և որից նա սարսափում էր. «*Ես ոչ թե մարմինս, այլ հոգիս վնասելուց էի վախենում, պարոն, այն անդունդից, որ կառաջանար իմ և մնացած մարդկության միջև: Ես վախենում էի իմ եզակիության ապացույցից*» (Carter 2006:36):

Եթե Ֆեվերսի կերպարը անհատականության և ինքնատիպության մարմնավորում է, ապա ի հակադրություն դրա, ամերիկացի լրագրող Ջեք Ուոլսերը անդեմ և զանգվածից չառանձնացող մարդու կերպար է: Պետք է նկատել, որ Ուոլսերի ամերիկացի լինելը նույնպես պատահականություն չէ, այլ որոշակի իմաստ ունի: Եվ անշուշտ ճիշտ է գրաքննադատ Հ. Սթոդարթը, երբ նշում է, որ Քարթերի ստեղծագործությունը քաղաքական և սոցիալական ուղղվածություն ունի: Ահա թե ինչպես է նկարագրում Քարթերը Ուոլսերին. «*Նա նման է լավ կահավորված բնակարանի, որը տալիս են վարձով: Այնտեղ դժվար է տեսնել բնավորության թեկուզ փոքր, բայց, ինչպես ասում են, անհատական գծեր: Թվում է մարդկանց չվստահելու նրա սովորությունը գործում էր նաև իր նկատմամբ: Այո, նա թեև կարողանում էր լինել ճիշտ պահին ճիշտ տեղում, բայց ինքը, կարծես, մի կորսված իր լինելը, որովհետև նրան նայելիս տեսնում էիր, որ ինքն իրեն չի գտել, որովհետև երբեք սեփական «ես»-ը չի եղել նրա որոնումների առարկան*» (Carter 2006:6-7):

Ի հակադրություն Ուոլսերի, Ֆեվերսը վառ անհատականություն է, որը միևնույն ժամանակ օժտված է մոգական հատկանիշներով: Եվ դա նույնպես պատահականություն չէ, այլ իր իմաստն ունի. Քարթերի մեկնաբանությամբ՝ անհատ լինելը վերերկրային, մոգական կարողություն է: Եվ հակառակը՝ զանգվածը և անդեմ մարդիկ զուրկ են մոգականությունից:

Քարթերը յուրահատուկ հմտությամբ է ստեղծում իր գրական կերպարները: Եթե Ուոլսերը անհատական հատկանիշներից զուրկ մարդ է, իսկ Ֆեվերսը վառ անհատականություն, ում յուրօրինակությունը անգն աչքով էլ նկատելի է, ապա ծաղրածու Բուֆֆոյի կերպարն այդ առումով ավելի բազմակողմանի է և առանձնահատուկ վերլուծության կարիք ունի: Բուֆֆոն մի կողմից դիմակ է կրում, որը թվում է կեղծիքի խորհրդանիշ է և թաքցնում է նրա իրական դեմքը, մյուս կողմից, Քարթերը բացահատում

է այդ դիմակի ետևում թաքնված նրա ինքնատիպությունը: Ահա, թե ինչ է ասում Բուֆֆոն ինքն իր մասին. «Կրկեսի օրենքները թույլ չեն տալիս, որպեսզի մեկը մյուսին ընդօրինակի կամ ձևափոխի: Որքան էլ, որ կարող է թվալ, որ Բուֆֆոն Գրիկի կամ Կոկոյի, և կամ Պոցցոյի, Պիցցոյի, Բիմբոյի կամ մեկ այլ ծաղրածուի կրկնօրինակն է, դա այդպես չէ: Նա կրում է իր բացառիկ առանձնահատկության կնիքը, որը հնարավոր չէ ընդօրինակել: Դա իմ ինքնությունն է, իմ՝ իր տեսակի մեջ եզակի անկախությունը: Այդ իմաստով իմ այս «դեմքը» ինձ պատկարարում է: Ես դարձել եմ այդ դեմքը, որն իմը չէ, բայց, որը ես ինքս եմ ընկրել: Քչերին է այդ հնարավորությունը տրված» (Carter 2006:137):

Քարթերի կենսափոխությունն արտահայտվում է նաև Բուֆֆոյի կերպարի միջոցով. «Մենք կործանում ենք մեզ, -ասաց Մեծն Բուֆֆոն»: Հարկ է նշել, որ Բուֆֆոյի հոգեբանական կերպարը միևնույն ժամանակ ծաղրածուի ընդհանրական կերպար է: Նա անհատ է, որը մի դեպքում իրեն զգում է հասարակությունից դուրս, մեկ այլ դեպքում՝ հասարակությունից վեր: Բայց երկու դեպքում էլ՝ նա տեսնում է մարդկային կյանքի չերևացող կողմերը և հասարակության՝ սովորական աչքից թաքնված երևույթները: Բուֆֆոն այդպիսով դառնում է նաև թեմատիկ կերպար, որի միջոցով Քարթերը պատմում է ծիծաղով քողարկված տխրության, ծիծաղի մեջ թաքնված արցունքների, աղմուկի մեջ կորսված լռության և մարդկային անհուսության մասին: Այստեղ տեղին է նշել Քարթերի գեղարվեստական ոճին բնորոշ բանաստեղծականությունը, որն արտահայտված է ոչ միայն տեսարանների գեղարվեստական պատկերայնությամբ, այլև, այս դեպքում, Բուֆֆոյի խոհական կերպարի միջոցով: Քարթերը վարպետորեն կերտել է դիմակով քողարկված դեմքի գեղարվեստական կերպարը, որպես մարդու միայնության, չհասկացվածության և հավերժական տխրության կերպար. «Հուսալքությունը՝ ծաղրածուի մշտական ուղեկիցն է», - ասում է Բուֆֆոն- «Դուք բոլորդ գիտեք, որ ծաղրածու հաճախ դառնում են այն ժամանակ, երբ ուրիշ ոչինչ այլևս չեն կարող անել: Եթե մաքրեք նրանց դեմքերից անթափանց սպիտակ դիմակները, ապա կտեսնեք այն մարդկանց դիմագծերը, որոնք ժամանակին հպարտացել են իրենց իրական դեմքերով: Երեխայի ծիծաղն անմեղ է այնքան ժամանակ, քանի դեռ նա չի ծիծաղել ծաղրածուի վրա» (Carter 2006:137):

«Գիշերները կրկեսում» վեպի հայեցակարգային շատ դրույթներ, ինչպես իրականության փոփոխականության, մարդկային փոխհարաբերությունների և աստիճանակարգման անկայունության, երևակայական և իրական աշխարհների փոխակերպումների,

ազատության՝ որպես անհատականության դրսևորման հնարավորության, ծիծաղի՝ որպես հաղորդակցության միջոցի և այլն, համապատասխանում են բախտինյան «տոն»-ի տեսությանը: «Կառնավալը ժողովրդի երկրորդ կյանքն է, որի սկզբնաղբյուրը ծիծաղն է: Դա նրա տոնական կյանքն է», - գրում Մ. Բախտինը: «Կառնավալը չեն հորինում, նրանում բոլորը ապրում են, որովհետև, ըստ էության, այն համաժողովրդական է: Քանի դեռ այն կա, ոչ մեկի համար դրանից դուրս չի կարող մեկ այլ կյանք լինել» Бахтин 1990:13): Բախտինը նշում է, որ կառնավալի ժամանակ կարող ես ապրել միայն նրա օրենքներով, այսինքն՝ միայն կառնավալային ազատության օրենքներով: Սա, իհարկե, ամբողջովին համապատասխանում է Քարթերի աշխարհայեցողությանը և հիմնավորում է կրկեսի, որպես վեպի գլխավոր միջավայրի ընտրությունը: Կրկեսը նույն կառնավալն է, որի ժամանակ վերանում են հասարակության մեջ գոյություն ունեցող սահմանները: Քարթերի կրկեսային կյանքը նույն՝ միջնադարյան ժողովրդական տոնախմբությունների սկզբունքների վրա է կառուցված:

Վեպի առաջին գլուխը բարդ է ոչ միայն բովանդակությամբ, այլև կառուցվածքով: Այն անկանոն է, որը կարելի է համարել գեղարվեստական հնար, քանի որ դրանով Ֆեվերսի կերպարն ավելի առեղծվածային է դառնում: Հաճախ հերոսուհին՝ Ֆեվերսը «խլում է» հեղինակի խոսքը և հանդես է գալիս որպես հեղինակ: Դրանով նույնպես Քարթերը բացահայտում է Ֆեվերսի բնույթը՝ իշխելու և գործողության ընթացքը կառավարելու նրա ձգտումը, ինչպես նաև շրջապատին մոլորեցնելու, հիմարացնելու նրա կարողությունը:

Երկրորդ գլխում ամեն ինչ փոխվում է. մոգականը, ի դեմս Ֆեվերսի, մերձենում է իրական կյանքին ավելի, քան նախկինում, իսկ պրագմատիզմը, որը մարմնավորված է Ջեք Ուոլսերի կերպարում՝ հակառակը, կտրվում է առօրեականությունից և հայտնվում իրական Ֆեվերսի մոգական և հեքիաթային աշխարհում:

Վեպի երրորդ գլուխը, որը կոչվում է «Սիբիր», ուշագրավ է՝ հերոսների ժամանակի զգացողության բացակայությամբ: Ընդհանրապես, Քարթերի ուղերձները տարբեր ուղղվածություն ունեն և արտահայտում են նրա ոչ միայն խոհափիլիսոփայական, այլև հասարակական և քաղաքական հայացքները: Եվ դա նույնպես հեղինակի նպատակներից մեկն է: Քարթերն իր հարցազրույցներից մեկում խոստովանում է, որ «Գիշերները կրկեսում» վեպը գրելիս իր գլխավոր նպատակը եղել է ընթերցողներին զբաղեցնելը և ուսանելը (Haffender 1985:76-96): «Ձբաղեցնել»-ը արվեստի իրավասությունն է, իսկ «ուսանել» ասելով՝ Քարթերն ի նկատի ունի իր գաղափարախոսությունը մարդկանց հաղորդելը:

Երրորդ գլխում Քարթերը պարզ և դյուրըմբռնելի կերպով ցույց է տալիս, թե ինչ խոչընդոտների և դժվարությունների է հանդիպում մարդը, երբ ուզում է պահպանել իր անհատական դեմքը և մարդկային արժանապատվությունը: Սիրիի ծանր պայմանները և կենցաղը Ֆեվերսին կտրում են կրկեսի հեքիաթային և գրոտեսկային միջավայրից: Բազմաթիվ դժվարություններ հաղթահարած Ֆեվերսը հանկարծ նկատում է, որ կտրվել է իր «ես»-ից: Դրան հաջորդում է նրա ինքնառնջացումը: Գունավոր փետուրները շուք պարզևելու փոխարեն հանկարծ ծանրության են վերածվում, և նա սկսում է ֆիզիկապես մաշվել և հոգեպես անհետանալ. *«Չնայած, որ հեռվից Ֆեվերսը դեռ կարող էր շիկահեր թվալ, բայց արդեն մեկ դույմ շագանակագույն մազեր էին երևում արմատների մոտ, և դա նկատելի էր նաև թևերի վրա, քանզի Ֆեվերսի փետուրները թափվում էին: ...Եվ ամեն օր տրոպիկական թռչունը ավելի և ավելի էր նմանվում լոնդոնյան ագռավի, այնպես, ինչպես ամեն ինչ սկսվել էր իր կյանքում. ասես, կախարդանքը անհետանում էր»* (Carter 2006:321): Փոխաբերական այս պատկերում բարձրացվում է անհատականության, որպես մարդկային ինքնության, ինչպես նաև կնոջ ինքնության պահպանության, հիմնախնդիրը:

Վեպի կարևոր բաղադրիչներն են նաև հեղինակի ստեղծագործական ոճին բնորոշ խորհրդանշական, հեքիաթային և իրականության հետ ոչ մի աղերս չունեցող սարսափելի հրեշներ հիշեցնող կերպարները և գլխապտույտ առաջացնող անսպասելի զարգացումներ ունեցող գործողությունները: Կարծում ենք, պատահական չէ, որ այդ կերպարներից շատերը, իրենց յուրօրինակության պատճառով, հասարակության կողմից կարծես ճնշված և մեկուսացված լինեն: Ֆեվերսը հակիրճ, բայց ամփոփ անդրադառնում է մադամ Շրեկի «ցուցասրահի» արտառոց հատկանիշներով և ունակություններով օժտված կերպարներին. *«Ուլքե՛ր էին աշխատում մադամ Շրեկի մոտ, պարոն: Բնության մեջ չգրեսնված այնպիսի արարածներ, ինչպիսին որ ես եմ: Չորս աչքանի սիրելի ծեր Ֆենին, Քնած Գեղեցկուհին, երեք ֆութ հասակ ունեցող Ուիլզիոյան Հրաշքը, Ալբերտ-Ալբերտինան, որ իրար անհամապատասխան երկու կես ուներ, աղջնակ, որին Սարդոստայն էինք կոչում»* (Carter 2006:66): Իր հիշողությունները Ուոլսերին պատմելիս Ֆեվերսը հիշում է Մադամ Շրեկի «ցուցասրահի» իր գործընկերներին, որոնցից յուրաքանչյուրը մի արտասովոր հատկանիշ ուներ: Տուսենը, որը մադամ Շրեկի օգնականն էր և պատասխանատուն բոլոր ելուստների համար՝ չուներ բերան, որը խորհրդանշում է, որ նա զրկված էր խոսքի իրավունքից:

«Գիշերները կրկեսում» վեպում Քարթերը ստեղծել է ամբողջական և ավարտուն կերպարներ, որոնք լրացնում են մեկը մյուսին և դառնում են ավելի լիարժեք՝ իրենց հարաբերությունների միջոցով: Անհատի և ամբոխի, մոր և դստեր, կնոջ և տղամարդու փոխհարաբերությունները, բեմի և ետնաբեմի տարբեր իրականությունների կապը Քարթերի գեղարվեստական հետազոտությունների առարկան են: Գրականագետ Գայանե Եղիազարյանը, անդրադառնալով Քարթերի ստեղծած կերպարներին, գրում է «Անջելա Քարթերի կերպարների արժեհամակարգային ցուցիչները կադապարվում են մի քանի շերտում՝ սեր, խանդ, եսասիրություն, տուն, ընտանիք, կին-տղամարդ փոխհարաբերություններ: Առանձնակի գույներով են կերտված կին կերպարները, որոնք ներկայանում են ամենատարբեր մոդուսներում՝ սիրող կին, զոհ-կին, անտարբեր կին, բռնակալ և խանդոտ կին, առեղծվածային և խորհրդավոր կին: Իսկ սիրո և նսեմ կրքի միջև ընտրությունը հեղինակը լուծում է առաջինի օգտին՝ ընտանեկան հանդարտ երջանկությունը անսեր տարածքում աղոտ նշմարելի, սակայն սպասված և լուսավոր լինելիություն դարձնելով» (Եղիազարյան 2020:170):

Վեպն ավարտվում է Ֆեվերսի ծիծաղով, որը տարածվում է սենյակում, տանը, ապա դուրս է գալիս և մտնում շրջակա բոլոր տները, դուրս է գալիս քաղաքից և փոթորկի նման պտտվելով՝ երկրից երկիր անցնում: Ֆեվերսի ծիծաղն ուղղված է Ուոլսերին: Եվ նկարագրությունները՝ մերթ պատրանքային, մերթ իրական, վեպի մինչև վերջին պահը ընթերցողին մոգական իրականության հանդեպ հավատ են ներշնչում և միայն վերջում ապտակի պես սթափեցնում են. «Պարկերացրու միայն, ես քեզ հիմարեցրել եմ: Դա նշանակում է, որ ոչնչի պեղք չէ հավաքալ», - ասում է Ֆեվերսը Ուոլսերին (Carter 2006:350): Նրա ծիծաղը բարձրանալով Երկրից էլ վեր, վերափոխվում է վերերկրային ծիծաղի՝ օդում կախված թողնելով նաև ճշմարտության հարաբերական լինելու գաղափարը:

Այսպիսով Քարթերը ղեկը թողնում է Ֆեվերսի ձեռքին: Եվ թեև նրա ծիծաղը երկրից երկիր է անցնում, բայց դա տխուր ծիծաղ է, և վեպի ավարտը նույնպես տխուր է: Անհատ և հասարակություն փոխհարաբերության հիմնախնդիրը մնում է չլուծված, որովհետև վեպի վերջում այն փոխակերպվում է անհատ և մոլորեցված զանգված փոխհարաբերության: Եվ առաջանում է հաջորդ հարցը, որն արդեն առնչվում է անհատի բարոյական նկարագրի հետ: Եվ պատահական չէ, որ Քարթերը հենց կրկեսն է ընտրել որպես իր գաղափարների արտահայտման վայր և մարդկային թաքնված տենչանքների դրսևորման ամենահարմար միջավայր: Կյանքի իմաստի և ունայնության, մարդկային

հարաբերությունների անկայունության, կնոջ և տղամարդու բարդ փոխհարաբերությունների, ինչպես նաև ազատության, սիրո, իրականի և անիրականի, գիտակցականի և անգիտակցականի մասին իր մտորումներն ու գաղափարները Քարթերն արտահայտում է կրկեսի հերոսների և աշխարհի հետ նրանց փոխհարաբերությունների միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Եղիազարյան Գ., «Անգլիացի և ամերիկացի կին գրողների երկերի արժեքաբանական հարացույցը», Երևան, 2020. Eghiazaryan G., «Angliaci & amerikaci kin groghneri erkeri arjheqabanakan haracowycy'», Er&an, 2020
2. Бахтин, М.М. Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса. М.: Художественная литература, 1990. Bahtin, M.M. Tvorchestvo Fransua Rable i narodnaja kul'tura srednevekov'ja i Renessansa. M.: Hudozhestvennaja literatura, 1990
3. Carter A., Nights at the Circus. Published by Vintage, 2006 ISBN 9780099388616
4. Stoddart H., Angela Carter's Nights at the Circus. A Routledge study guide. London and N.Y.: 2007
5. Alison Flood (6 December 2012). "Angela Carter named best ever winner of James Tait Black award". *The Guardian*. Retrieved 6 December 2012.

ANI ASLANYAN - THE PROBLEM OF INDIVIDUALITY IN THE NOVEL 'NIGHTS AT THE CIRCUS' BY ANGELA CARTER

Keywords: *Angela Carter, 20th century English Literature, feminist literature, magical realism, the novel 'Nights at the Circus', the problem of individuality*

The article analyzes the problem of individuality in the novel 'Nights at the Circus' by English novelist Angela Carter. It examines the problems of self-affirmation and self-preservation of of individuality in the modern world and the interrelation of an individual and the society. The analysis od symbols and symbolic characters created through Magical Realism is also provided.

**АНИ АСЛАНЯН - ПРОБЛЕМА ЛИЧНОСТИ В РОМАНЕ АНДЖЕЛЫ КАРТЕР
"НОЧИ В ЦИРКЕ"**

Ключевые слова: Анджела Картер, английская литература 20-го века, феминистская литература, магический реализм, роман "Ночи в цирке", проблема личности

В статье рассматривается проблема личности в романе английской писательницы Анджелы Картер "Ночи в цирке". Целью работы является анализ проблемы самостановления и самосохранения личности в современном мире и соотношение личности и общества. Также дан анализ символов и символических образов, которые созданы при помощи магического реализма как художественного метода.

Ներկայացվել է՝ 20.09.2021

Գրախոսվել է՝ 20.09.2021

Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի ամբիոնի կողմից՝ 27.10.2021